

Նոյեմբեր 06, 2009 18:09

Ամայա Կոստանյան



Հարցազրույց «Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավար Ամայա Կոստանյանի հետ

-Կառավարությունը հասարակական կազմակերպությունների մասին օրենքի նախագիծ է նախապատրաստվում ներկայացնել Ազգային ժողով: Ինչպե՞ս եք վերաբերվում այդ նախագծին:

-Ընդհանուր առմամբ, մենք կողմ ենք ավելի թափանցիկ և հաշվետու պահել և՛ հ/կ, և՛ ցանկացած այլ ոլորտ Հայաստանում: Մեր բացասական վերաբերմունքն այն պատճառով է, որ մի քանի խոչընդոտներ են ստեղծվելու, եթե այդ օրենքն ընդունվի:

-Ի՞նչ խոչընդոտների մասին է խոսքը:

-Մեր առաջին դժգոհությունն այն է, որ ոչ թափանցիկ, ոչ մասնակցային կերպով մշակվել են այդ օրենքի փոփոխությունները: Եվ եթե ասվում է, որ ինչ-որ հ/կ-ների հետ խորհրդակցել են այն փոփոխությունների ենթարկելիս, մենք կցանկանայինք իմանալ, թե այդ ովքե՞ր են մասնակցել: Ոչ միայն մենք, այլ նաև մոտ 100 հ/կ, որոնք այդ գործընթացին մասնակցել են, ընդհանրապես ոչ մի տեղեկություն չեն ունեցել այդ գործընթացից: Այս ամենն ի սկզբանե թափանցիկ չէ, որովհետև տվյալ ոլորտում ուզում ես բարեփոխումներ իրականացնել, ավելի ճիշտ է շահառուների կամ այդ օրենքի սուբյեկտների հետ խորհրդակցել:

-Որո՞նք են Ձեր մտահոգությունները:

-Օրենքում բազմաթիվ դժվարություններ են մտցրել: Դրանցից մեկն այն է, որ պետք է հրապարակվի տարեկան հաշվետվությունը, որը բավական մեծածավալ է, և մեծ գումար է պահանջվում, ինչը մենք չենք կարող լրացուցիչ աղբյուրներից հայթայթել: Ամենակարևոր մտահոգությունն այն է, որ մենք չենք կարծում, թե պետական ռեգիստրն արդեն ունի ունակություն գնահատելու մեր ծրագրային գործունեությունը, և տեսնելու, թե դա ինչքանով է համապատասխանում մեր կանոնադրությանը: Հ/կ-

ները բազմաթիվ և բազմազան են, և մասնագիտական կարողություններ են պետք այստեղ:

-Տիկի՛ն Կոստանյան, կառավարությունը, սակայն, այդ փոփոխությունները որպես բարեփոխումներ է ներկայացրել:

-Ներկայացնում են, թե դա բարեփոխում է, սակայն մեր կարծիքով դա բավականին կոպիտ փորձ է՝ պարզապես ավելի սաստկացնելու վերահսկողությունը:

Քանի որ մենք իրավական պետության մեջ չենք ապրում, հույս ունենանք, որ դա շատ արդար և հավասար է կիրառվելու, այլ բան է, սակայն, որ մենք այդպիսի հույս չունենք, և դա էլ մեզ մտահոգում է:

-Ի վերջո, այս ամենի նպատակը ո՞րն է, և ի՞նչ էք պատրաստվում անել:

-Մենք քննարկումների մի շարք ենք պատրաստում: Այս ամենը կհասցեագրենք պետական կառույցներին, ԱԺ պատգամավորներին: Այս հարցին մենք պատրաստվում ենք հնչեղություն տալ: Մենք պահանջում ենք օրենքն այս տեսքով հետ կանչել, և պատրաստ ենք մասնակցել քննարկումներին ու գնահատել, թե ինչպիսին է իրավիճակը ոլորտում, և երկու կողմից էլ ինչ է պետք անել, որ այս ոլորտը լինի ավելի թափանցիկ և հաշվետու:

Մենք կողմնակից ենք, որ պարզ և թափանցիկ լինի ամեն ինչ, բայց գիտենք, որ հավասար պայմաններ չեն ապահովում մեր երկրում ցանկացած օրենքի առջև, դա է մեր հիմնական մտահոգությունը: Այս օրենքում չարաշահումների և կոռուպցիոն ռիսկեր կան:

Զրույցը վարեց Սյուզի Մելքոնյանը